ԱՆՏԻՊ ԷՋԵՐ

ԳՈՒՍԱՆԵՐԳՈՒԹԻՒՆ

(ԵԿԵՂԵՑԻԻ ՄԸ ՀՐԴԵՀԷՆ ԱԶԱՏՄԱՆ ԱՌԻԹՈՎ ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏՕՐԷՆ)

Նոր գերապանծ փառօք բերկրեալ ցնծա հարսն անեղին.
Ահա նորոգ գովեստ յարմար չիքէն սքանչիցըն նորածին:

Չի թէ արփին խեթիւ դիտեաց՝ զգենո՞ւս միթէ զսեաւ տխրալին,
Ահա անդրէն ի դարձ ելեալ ընդ առաջեալ քո եղբօր որդին:

ԱՂԵՐՍ ՀԱՐՍԻՆ

Ցառնելըն քո առ ի խնդիր ի հրապարակս ընդ փողոցին
Ահա նա իմ եղբօր որդին միթէ տեսէ՞ք արք հանդէսին:

Եղբօր որդին իմ անց զինեւ եւ ոգի իմ ել ընդ բանին.
Ահա նա աչք իմ լի ցօղով, միթէ տեսէ՞ք զիմ բաղձալին:

Ո՞ւր ընթացա՛ւ եւ ո՞ւր գտայց եւ ո՞ւր դիտէ զլոյս արեւին,
Ահա ընթացս իմ տոչորիմ միթէ տեսի՞ք զիմ անձկալին:

Աչք նորա է իբր զաղաւնիս. լուացեալ կաթամբ ջուրց բազմալի.
Եւ ձեռք նորա ոսկի մաքրեալ լցեալ ակամբ շափիւղայի:

Շրթունք նորա շուշանք բուրեն, ծնօտք նորա տաշտ կնդրուկի.
Կոկորդ նորա լի քաղցրութեամբ, ամենեւիմբ յոյժ ցանկալի:

Տեսիլ նորա իբրեւ զընտիր եղեւնափայտ Լիբանանի.
Ահա այն է եղբօր որդին այն մերձաւոր 'ւ իմ սիրելի:

Օն եւ օն ձեզ իմ օրիորդք, եթէ տեսէք ազդեցէք ինձ,
Մինչեւ կալայց եւ ոչ թողից. համբուրեցից զիմ ցանկալի:

Ի կողկողելդ առ ի հարցմունս՝ որոնել քո արտասուագին
Ահա նա գայ լերանց բարձանց սաստիկ սիրով ի քեզ մերձին:

ՓԵՍԱՑՆ ԱՍԷ

Բաց ինձ, ասէ, քոյր իմ զդուրս քո, գեղեցիկ իմ ամենեւին.
Ահա նա գլուխ իմ լի ցօղով, վարսք իմ շաղից գիշերային:

Զայնեալ ի քեզ եղբօր որդին արի եկ դու մերձաւոր իմ
Ահա ծմեռն անձրեւք անցին, ծաղկունք յերկրի գունագեղին:

Որթք մեր ծաղկեալ զհոտն բուրեն եւ լուր եղեւ ծայն տատրակին
Արի եկ դու աղաւնիդ իմ, կատարեալ իմ, գեղեցիկ իմ:

Մուծեալ զքեզ ի տուն զինւոյ կարգեն զսէր քո սիրելին.
Հեռակ նորա քոյին զգլխովդ եւ աջ նորա զքեւ պատին:

Այն իւղ թափեալ չքնաղ անուն քո մերձաւոր եղբօր որդին
Ահա նա ետ համբոյր ի քեզ, զի իղձ սրտիդ կատարեսցին:

Ողկոյզ ծաղկեալ եղբօր որդին բուրեալ նարդոսն ընդ ստաշխին.
Ահաւադիկ կաս զեղեցիկ առ ի վայելս քո փեսային:

Ծանեաւ ըզքեզ անհաս գեղով չթողլով ըզհետ զարշապարին.
Ահա նա քեզ եւ դու նմա, զի հովուեսցէք ի շուշանին:

Գնացեր ըզհետ եղբօրորդոյդ առ յուղղութիւն օրինակին.
Ահա եղեր զնա կնիք սրտի՛դ եւ մատանի յաջոյ ձեռին:

Նաեւ ի քեզ յոյժ խանդ։ակաթ խանդատեալ ի սէր քոյին
Ահա ընթացք գետոց եւ ջո ըց սէրդ ի սիրոյն ոչ բաժանին:

Այ դու քանի զեղեցկանաս, այ դու քանի մեզ քաղցրանաս
Սէր փափկութեան քում յարմարի փեսայն անյագ սիրով կապի:

ՕՐԻՈՐԴՔՆ ԱՍԵՆ Ի ԲԵՐԱՆՈՑ ՀԱՐՍԻՆ

Արդ զինչ պատմես քո դստերացն, այ թագուհի գեղեցկային.
Թէ ահա նա իմ եղբօր որդին կարմիր սպիտակ ընտրել ընաւին:

Արի հիւսիս եւ եկ հարաւ շնչեա յայգիս զի ծաղկեսցին
Ահա նոր գայր մերձաւոր իմ, հանգիլ ի մէջ բուրաստանին:

Այ օրիորդք դստերք փառաց նուագեցէք ծայն ներբողին,
Ահա օր է ինձ հարսնութեան գտի արդ զոր սիրեաց անձն իմ:

Սիրելին իմ ի սենեակէ երգեսցուք սէր զանլրելին.
Ցորդորեցին ծայն քաղցր յարմար՝ ծագման սիրոյ յառաւօտին:

Երկու ստինք ուլս երկւորիս արածելով մէջ շուշանի,
Ահա ի լեռն զմռնենեաց եւ ի բլուրն կաս քրքումի:

Ջնոր առ հնով ետ ինձ մայր իմ, քեզ պահեցի եղբօր որդի.
Արդ ասա ինձ ով տայր ի քեզ դիտել զստինս ով տենչալի:

Ի ՓԵՍԱՑԷՆ ԱՌ ՀԱՐՍՆ ԴՐՈՒԱՏՍ ԵՐԳԵՆ

Փոխարինեալ դու զովեցար ի բերանոյ սուրբ փեսային
Ահա բազում են թագուհիք, մի աղաւնիդ, մի սիրելին:

ՕՐԻՈՐԴՔՆ ԱՌ ՀԱՐՍՆ

Անուն եղաւ քեզ առաւօտ, եւ գեղեցիկ իբր զլուսին,
Ահա դու կաս զարմանալի պայծառատիպ գեր քան զարփին:

Առեալ ածեր ի տուն մօր քո յընդեցելոյ մեծ սենեկին,
Ահա նա շունչ ետուր ի մեզ հոգիազգեստ սուրբ համբուրին:

Որովայն քո շեղջ ցորենոյ շուշան ծաղկօք լցեալ փակին.
Ահա ելեր յարմաւենին եւ ընկալաբ զվերնոյ նորին:

Գոյն ոսկեճեղ Լիբանանի սաղարթախիտ բազմորակին,
Ահա նա վարդ քո կարմրերփեան նորոգ թփոյդ վառեալ զփայլին:

Այտ քո իբրեւ զնրռնասին թէպէտ դրժոլ վարսքդ երեւին.
Ահա՜ նո՜ր փառք քո ի ներքոյ ախորժակաւ դեղ հիւանդին:

Սափոր լցեալ հացիւն երկնից անմահութեան ճաշակողին
Ահա ըմպել տաս զգինին ազնիւ ի նռնենեաց սուրբ խորհրդին:

ՊԱՏՄ. ՀՐԱԿԻԶՄԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ
(228 - 230)

ԵՐԵՄԻԱ Ձ. ՊԷՕՄԻՒՐՃԵԱՆ